

## Կովկասյան բարոմետր 2013

### Հետազոտության համառոտ նկարագրությունը

Կովկասյան բարոմետրը (ԿԲ) տարածաշրջանային ամենամյա նախագիծ է, որի նպատակը հարավկովկասյան երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունն է: Արժանահավատ տվյալների միաժամանակյա հավաքագրումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնային տնտեսություններում իրականացվում է 2004թ-ից ի վեր և շարունակական հնարավորություն է ընձեռում իրականացնելու նաև միջերկրային համեմատություններ՝ բացահայտելով տարածաշրջանի երկրներում դիտարկվող երկարաժամկետ միտումները: 2006թ-ից ի վեր հետազոտություններն ընդգրկում են ինչպես մայրաքաղաքներն, այնպես էլ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերը<sup>1</sup>:

### Հարցման գործիքը

Հարցաթերթը մշակվել է Հարավային Կովկասի երեք երկրների փորձագետների կողմից և տարեցտարի վերանայվել է. ավելացվել են նոր հարցեր, բացառվել են որոշ, ոչ այնքան արդյունավետ հարցեր, անհրաժեշտության դեպքում աննշան փոփոխություններ են արվել մնացած հարցերում: Հիմնական հարցաթերթը պարունակում է Հարավային Կովկասի երկրներում ժողովրդագրական, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ ավելի քան 100 հարց: 2013թ. հարցաթերթը հարստացվել է տարածաշրջանային հակամարտությունների, մարդու իրավունքների, Ֆեյսբուք սոցիալական ցանցի և սոցիալական օժանդակության ծրագրերի վերաբերյալ բոլոր երեք երկրներում առաջադրված հարցերով: Հայաստանյան հարցաթերթը պարունակում է նաև երեք փորձնական հարց, որոնք տրվել են երկու անգամ՝ գնահատելու համար հարցերի ձևակերպման ազդեցությունը պատասխանների վրա:

### Հարցման մեթոդաբանությունը

Նախորդ տարիների նման, ԿԲ 2013-ի համար ևս կիրառվել է բազմաստիճան կլաստերային ընտրանք՝ ընդգրկելով ողջ չափահաս բնակչությունը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Յուրաքանչյուր երկրի սահմաններում տարանջատվել են մայրաքաղաքային, քաղաքային և գյուղային մակրոտարածանքներ՝ բաժանելով յուրաքանչյուրը հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան, հարավարևելյան և հարավարևմտյան աշխարհագրական տարածաշրջանների: Ընտրանքի առաջին փուլում յուրաքանչյուր ստրատայում պատահականորեն ընտրվել են ընտրատեղամասերը՝ վերջիններիս չափի համամասնության սկզբունքով: Ընտրատեղամասի չափը որոշվել է դրանում գրանցված ընտրողների թվով: Երկրորդ փուլում թիրախային տնային տնտեսությունների թիվը որոշվել է պատահական սկզբնակետով, սիստեմատիկ քայքայի մեթոդով: Վերջին՝ երրորդ փուլում, հարցվողների ընտրության համար կիրառվել է Քիշի աղյուսակը: Դեմ առ դեմ հարցազրույցներին 2013թ. մասնակցել է 5953 հարցվող (1832՝ Հայաստանում, 1988՝ Ադրբեջանում և 2133՝ Վրաստանում):

### Տվյալների հասանելիությունը

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքի մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, տվյալների շտեմարանը (SPSS և STATA ֆորմատներով) և որոշ արդյունքներ տեղակայված են ՀՌԿԿ տարածաշրջանային կայքերում՝ [www.crrccenters.org](http://www.crrccenters.org) և <http://caucasusbarometer.org>, ինչպես նաև ՀՌԿԿ-Հայաստանի կայքում՝ <http://www.crrc.am/research-and-surveys/caucasusbarometer/documentation?lang=hy>: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-Հայաստանն իր գործունեությունն սկսել է 2003 թվականին՝ որպես Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնված Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ցանցի մի մաս: Երկար տարիներ զարգանալով Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի ծանրակշիռ աջակցությամբ՝ 2013թ. կեսերից ՀՌԿԿ-Հայաստանը ստացել է անկախ հիմնադրամի կարգավիճակ՝ շարունակելով հետամտել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը խթանելու հիմնական նպատակով:

### ՀՌԿԿ-Հայաստան.

Երևան 0025, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ գրադարանի մասնաշենք, 6-րդ հարկ, 602 սենյակ:  
Հեռ./Ֆաքս՝ +374 10 57 48 68  
+374 10 57 48 98

Էլ. փոստ՝ [crrc@crrc.am](mailto:crrc@crrc.am)  
կայք՝ [www.crrc.am](http://www.crrc.am)

Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին տեղեկությունների համար այցելել՝ [www.crrccenters.org](http://www.crrccenters.org):

<sup>1</sup>Հարցումներ չեն անցկացվել Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Հարավային Օսիայում: